ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/112

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Բողոք բերող՝ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ա. Պողոսյանի, ներկայացուցիչներ՝ Ա. Կուլախսզյանի, Լ. Գևորգյանի,
«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Վ. Գրիգորյանի, Կ. Ասատուրյանի, Հ. Պետրոսյանի, Է. Վարդանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԿՏԱԿ–ԲՄԾՁԲ–21/11» ծածկագրով բաց մրցույթ, 2022-2024թթ. Հայաստանի կրթական ցանցում ընդգրկված 1420 ուսումնական հաստատություններին ինտերնետի մատակարարման, հաստատությունների ներքին համակարգչային ցանցերի, աշխատող համակարգիչների ծրագրային ու տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն)

կողմից 03.12.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին ընդունել որոշում՝ Հրավերում՝ ներառյալ դրա թիվ 6 հավելվածով հաստատված պայմանագրում և տեխնիկական բնութագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ՝ սահմանելով ծառայությունների մատուցումն ապահովելու համար բավարար և տեխնիկապես խելամիտ ժամկետ (առնվազն վեց ամիս):

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 03.12.2021թ.-ին:

07.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/112 համարի ծածկագիրը:

15.12.2021թ.-ին, 24.12.2021թ.-ին և 30.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 24.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.12.2021թ.-ին:

2. «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն 03.12.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար նախաձեռնվել է «2022-2024թթ. Հայաստանի կրթական ցանցում ընդգրկված 1420 ուսումնական հաստատություններին ինտերնետի մատակարարման, հաստատությունների ներքին համակարգչային ցանցերի, աշխատող համակարգիչների ծրագրային ու տեխնիկական սպասարկման ծառայություն» ձեռքբերման նպատակով անցկացվող ԿՏԱԿ-ԲՄԾՁԲ-21/11 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ «Բաց մրցույթ»):

Բաց մրցույթի Գնման առարկա է հանդիսանում «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ «2022-2024թթ. Հայաստանի կրթական ցանցում ընդգրկված 1420 ուսումնական հաստատություններին ինտերնետի մատակարարման, հաստատությունների ներքին համակարգչային ցանցերի, աշխատող համակարգիչների ծրագրային ու տեխնիկական սպասարկման ծառայության» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև «Ծառայություն»), որոնք խմբավորված են 1 չաւիաբաժնում:

ԿՏԱԿ-ԲՄԾՁԲ-21/11 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2021թ. նոյեմբերի 11-ի N2 2 որոշմամբ հաստատված հրավերի (այսուհետ՝ «Հրավեր») 8.1 կետի համաձայն՝ հայտերի բացումը կկատարվի հանձնաժողովի հայտերի բացման նիստում՝ նույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հաշված 40-րդ օրվա (2021թ. դեկտեմբերի 21-ին) ժամը 11:00-ին:

Բաց մրցույթին ցանկանում է մասնակցել նաև «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն (այսուհեւ նաև՝ « Ընկերություն»):

Ընկերությունը բաց մրցույթի հրավերի թիվ 6 հավելվածում ներկայացված ծառայության մատուցման պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածը «Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց» (այսուհեւ՝ «Տեխնիկական բնութագիր») ուսումնասիրելիս, պարզել է, որ մատուցվելիք ծառայությունների բարդ և ծավալուն տեխնիկական բնութագրերի ապահովման համար (այն է՝ թվով 1420 ուսումնական հաստատություններին ինտերնետի հասանելիության համար համապատասխան քանակությամբ վերջնակետային սարքավորման ձեռք բերում, մալուխագծերի անցկացում, միացում և ծրագրային կարգաբերումներ) տրամադրվում է առերևույթ անողջամիտ ու խտրական ժամկետ (պայմանագրի կնքումից հետո 1 օր) այն կազմակերպություններին, որոնք դեռևս նշված պատվիրատուին նմանատիպ ծառայություններ չեն մատուցել: Ստացվում է, որ այսպիսի տեխնիկական բնութագրի պարագայում բաց մրցույթում կարող է մասնակցել միայն մեկ մասնակից՝ ծառայության ընթացիկ մատուցողը, իսկ նոր մասնակիցների՝ Բաց մրցույթին մասնակցությունը փաստացի բացառվում է:

Վերը նկարագրված պայմանների պարագայում ծառայությունների ընթացիկ մատուցողի և մրցույթի այլ մասնակիցների համար հավասար պայմաններ չեն ապահովվում, ինչպես նաև չեն կատարվում գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման պահանջները: Բաց մրցույթին ընդամենը մեկ մասնակցի մասնակցելու

արդյունքում չի ապահովվում մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքների իրագործումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

Մատուցվելիք ծառայությունների բարդ և ծավալուն տեխնիկական բնութագրեր սահմանելով և մրցույթի բոլոր մասնակիցների համար դրանք տեխնիկապես ապահովելու համար բավարար խելամիտ ժամկետ չտրամադրելով՝ խախտվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված գնումների գործընթացի խտրականությունը բացառելու և մրցակցությունը խրախուսելու վերոգրյալ սկզբունքները:»:

Հաշվի առնելով վերը նշվածը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին ընդունել որոշում՝ Հրավերում՝ ներառյալ դրա թիվ 6 հավելվածով հաստատված պայմանագրում և Տեխնիկական բնութագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ՝ սահմանելով ծառայությունների մատուցումն ապահովելու համար բավարար և տեխնիկապես խելամիտ ժամկետ (առնվազն վեց ամիս):

Ընկերությունը, 27.12.2021թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ, փոփոխել է պահանջը և Բողոքներ քննող անձին խնդրել է բավարարել բողոքը. պարտավորեցնել «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին ընդունել որոշում՝ Հրավերում՝ ներառյալ դրա թիվ 6 հավելվածով հաստատված պայմանագրում և Տեխնիկական բնութագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ՝ սահմանելով ծառայությունների մատուցումն ապահովելու համար բավարար և տեխնիկապես խելամիտ ժամկետ (առնվազն վեց ամիս), մասնավորապես, սակայն չսահմանափակվելով ստորև ներկայացվող լուծման տարբերակով՝

պարտավորեցնել «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին ընդունել որոշում՝ Հրավերի ողջ փաթեթում (ներառյալ կնքվելիք պայմանագրի նախագիծը) «2022-2024թթ.» ժամկետը փոխարինել «2022թ. հուլիսի 1-ից 2024թ. դեկտեմբերի 31-ը»

ժամկետով, շարունակել բողոքարկված մրցույթի անցկացումը փոփոխված պայմաններով, միաժամանակ արգելելով Պատվիրատուին՝ կատարել գործողություններ և/կամ ընդունել որոշումներ, որոնք ուղղված կլինեն բողոքարկված մրցույթի դադարեցմանը (չեղարկմանը), ներառյալ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն:

3. <u>«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.12.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/20053-2021 գրությամբ դիմել է «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 03.12.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 08.12.2021թ.-ին թիվ 052/21 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««ԿՏԱԿ-ԲՄԾՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթի գնման տեխնիկական բնութագիր-ժամանակացույցը կազմվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում կա 1-ից ավելի ինտերնետ մատակարարման օպերատոր, ովքեր կկարողանան ապահովել այս ծառայության մատուցումը «ԿՏԱԿ-ԲՄԾՁԲ-21/11» ծածկագրով բաց մրցույթի հրավերում նշված ժամանակացույցով, ինչի ապացույցներից մեկը հանդիսանում է այն փաստը, որ ՀՀ Կառավարության կողմից հայտարարված «ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/18-17/01» ծածկագրով ՇՀ-ն ունեցել է 3 մասնակից, որոնք պատրաստ են եղել մատուցել տվյալ ծառայությունը հաջորդ օրվանից: Սա փաստում այն մասին, որ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի եզրակացությունն այն մասին, որ տրամադրվում է առերևույթ անողջամիտ ու խտրական ժամկետ, և, որ մրցույթին կարող է մասնակցել միայն 1 մասնակից՝ անհիմն է:

Հիմք են ընդունվել նաև ՀՀ Կառավարության կողմից հայտարարված «ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ- 15/18-17/01» ծածկագրով ՇՀ-ի և ՀՀ Վարչապետի աշխատակազմի կողմից

հայտարարված «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթի տեխնիկական բնութագիրն ու գնման ժամանակացույցը, ինչպես նաև նմանատիպ ծառայության ձեռքբերման համար այլ պատվիրատուների կողմից հայտարարված ընթացակարգերում ներառված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերը:

Այս ծառայության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ պետք է ապահովել վերջինիս անընդհատությունը, դպրոցները չեն կարող կազմակերպել իրենց բնականոն գործունեությունն առանց ինտերնետ կապի, քանի որ դպրոցներում ներդրված է Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը, որի միջոցով դպրոցները վարում են էլեկտրոնային մատյան, դպրոցից դպրոց երեխաների տեղաւիոխումն իրականացվում է ավտոմատացված, դասարանների կոմպլեկտավորումը, տարիֆիկացիան և շատ այլ գործառույթներ թվայնացված են և ավտոմատացված:

Վերը շարադրվածից պարզ է դառնում, որ պետք է ապահովվի անընդհատությունը, և «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի պահանջը չի կարող բավարարվել, քանի որ ըստ իրենց պահանջի դպրոցները առնվազն 6 ամիս չեն ունենալու ինտերնետ հասանելիություն, ինչը կբերի շատ աշխատանքների դադարեցման:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/112 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022-2024թթ. Հայաստանի կրթական ցանցում ընդգրկված 1420 ուսումնական հաստատություններին ինտերնետի մատակարարման, հաստատությունների ներքին համակարգչային ցանցերի, աշխատող համակարգիչների ծրագրային ու տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերման նպատակով 11.11.2021թ.-ին հայտարարվել է «ԿՏԱԿ–ԲՄԾՁԲ–21/11» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ կետի համաձայն:

iii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝ նախատեսվում է գնել

2022-2024թթ. համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրերի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31.12.2024թ.:

iv. Հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

N	Անվանում	Նկարագրությունը
1.	Առանձնացված կապուղի	Առանձնացված օպտիկամանրաթելային կապուղու ապահովում կապի ծառայությունների մատակարար ընկերության (այսուհետ՝ ԿԾՄ) 2 տարբեր հանգույցներից դեպի Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն, ք. Երևան, Բուռնազյան 37 (այսուհետ՝ կենտրոնական հանգույց):
		Առանձնացված օպտիկամանրաթելային կապուղու ապահովում կենտրոնական հանգույցի և հավելված 1-ի Ցանկ 1-ում և Ցանկ 2-ում ներկայացված կետերի միջև:
		Առանձնացված մեկ այլ կապուղու ապահովում (բացառությամբ «GSM(WCDMA,CDMA,3G,4G,LTE,5G)» տեխնոլոգիայի) կենտրոնական հանգույցի և հավելված 1-ի Ցանկ 3-ում ներկայացված կետերի միջև:
		Պահուստային «GSM(WCDMA,CDMA,3G,4G,LTE,5G)» կապի ապահովում կենտրոնական հանգույցի և հավելված 1-ի Ցանկ 1-ում, 2-ում և 3-ում ներկայացված կետերի միջև:
		Տրամադրվող կապուղին ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս պետք է լինի ֆիզիկապես առանձին:
2.	Պայմաններ	• Ապահովել կենտրոնական հանգույցում 8gb/s՝ օգտագործելով SFP+ տեխնոլոգիան, հավելված 1-ի NN 1 և 2 Ցանկերի յուրաքանչյուր կետում առնվազն 50mb/s երաշխավորված, երկկողմանի(սիմետրիկ) տվյալների փոխանցման հնարավորություն: • «latency» առավելագույնը 10 ms:
		• Ապահովել հավելված 1-ի Ցանկ 3-ի յուրաքանչյուր կետում առնվազն 16 mb/s թողունակությամբ երաշխավորված, երկկողմանի(սիմետրիկ) տվյալների փոխանցման հնարավորություն: • «latency» - 90% կետերում առավելագույնը 45 ms և 10% կետերում առավելագույնը 80 ms:
		• Պահուստային կապ - ապահովել հավելված 1-ի NN 1, 2 և 3 Ցանկերի յուրաքանչյուր կետում առնվազն 512Kb/s թողունակությամբ տվյալների փոխանցման հնարավորություն: • «latency» առավելագույնը 120 ms
		• Հիմնական ինտերնետ (ԿԾՄ-1) - առնվազն 3 gb/s թողունակությամբ և միաժամանակ առնվազն 1000 mb/s թողունակությամբ ՀՀ տարածքում • Պահուստային ինտերնետ (ԿԾՄ-2) - առնվազն 500mb/s թողունակությամբ և միաժամանակ առնվազն 200 mb/s թողունակությամբ ՀՀ տարածքում
		• «Dynamic routing» ԿԾՄ-ների և կենտրոնական հանգույցի միջև
		• Անհրաժեշտ սարքավորումների տեղադրում, կարգաբերում և սպասարկում • տեխնիկապես ապահովել ցանկացած կետում օգտագործվող ծառայությունների (հեռախոսակապ, ներքին ցանց, առանձնացված սերվերներ և այլն) բաժանումը տարբեր «Layer2» ենթացանցերի • տարբեր կետերի խմբավորումը ըստ ծառայությունների «Layer2» ենթացանցերի • ապահովել համակցում վերոնշյալ «Layer2» խմբերի միջև • ապահովել ցանկացած «Layer2» պրոտոկոլների թափանցելիություն ցանկացած կետում • կապուղիների պատկերավոր նկարագրություն
		• Տեխնիկական բնութագրի հավելված 1-ի NN 1, 2 և 3 Ցանկերով նախատեսված հասցեների փոփոխության կամ նոր հասցեների (մինչև թվով 25) ավելացման դեպքում, Պատվիրատուի գրավոր պահանջով, առանց հավելյալ վճարի, հրավերի դրույթներին համապատասխան ապահովել Ծառայության մատուցումը նոր հասցեներում, ինչպես նաև օպտիկամանրաթելային կապուղով ապահովել այդ հասցեները
		• Տեխնիկական բնութագրի հավելված 1-ի NN 1 և 2 Ցանկերով նշված որևէ կետի օպտիկամանրաթելային կապուղիով միացման անհնարինության դեպքում, անհրաժեշտ է տեղեկացնել) «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին: Պատվիրատուի համաձայնությունը ստանալուց հետո կատարողը 15 օրյա ժամկետում նշված հասցեի փոխարեն կարող է միացնել 2 կետ հավելված 1-ի 3-րդ Ցանկից:
		• Կենտրոնական հանգույցից պետք է հասանելի լինի ուսումնական հաստատությունների օգտագործած ինտերնետ տրաֆիկի մոնիտորինգ՝ ինտերնետային պարունակությունը սահմանափակող ֆիլտրային ծրագրերի կիրառմամբ (content filter):
		Տեխնիկական բնութագրի հավելված 1-ի NN 1, 2 և 3 Ցանկերով նախատեսված հասցեներում (այսուհետ՝ Ուսումնական հաստատություններ) կապի հանգույցի սպասարկում • Ուսումնական հաստատությունների կապի հանգույցի սերվերային սարքավորումների և սերվերային համակարգերի սպասարկում

		Ուսումնական հաստատությունների կապի սարքավորումների սպասարկում • Կապի սարքավորումների առցանց կարգավիճակի ապահովում: • Կապի սարքավորումների վերատեղադրում, փոխարինում, կարգավորում, կարգաբերում:
		Ուսումնական հաստատությունների տեղային համակարգչային ցանցերի սպասարկում. • Տեղային համակարգչային ցանցերի անխափան աշխատանքի ապահովում: • Տեղային համակարգչային ցանցի առկայության դեպքում անհրաժեշտության դեպքում նոր համակարգիչների և ՏՀՏ սարքավորումների միացում տեղային համակարգչային ցանցերին:
		Ուսումնական հաստատությունների համակարգիչների ծրագրային ապահովման սպասարկում. • Ծրագրային խափանումների դեպքում լիցենզիոն ծրագրային ապահովման փաթեթների տեղադրում: • Համակարգչային վիրուսներով ախտահարված համակարգիչների վնասազերծում և ծրագրային ապահովման բնականոն աշխատանքի վերականգնում: • Հակավիրուսային ծրագրերի տեղադրում դպրոցների տեղային համակարգչային ցանցերում ընդգրված համակարգիչների վրա և դրանց պարբերական թարմացում:
		Վերը նշված ծառայություններն իրականացվում են հեռահար և ֆիզիկական սպասարկման միջոցով: Հեռահար սպասարկումը իրականացվում է հեռահար կառավարման ծրագրերի միջոցով: Ֆիզիկական սպասարկումն իրականացվում է այցելության միջոցով հետևյալ դեպքերում՝ • հեռահար միջոցներով խնդիրը լուծելու անհնարինության դեպքում: • կապի սարքավորումների փոխարինման/վերատեղադրման դեպքերում: • ներքին ցանցում աշխատանքների իրականացման անհրաժեշտության դեպքում:
3.	Որակի պահանջներ	Մեկ տարվա ընթացքում Կենտրոնական հանգույցում ինտերնետ հասանելիության խափանումների (բացակայությունների) քանակը չպետք է գերազանցի 6-ը: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում Ինտերնետ հասանելիության բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամկետով:
		Մեկ ամսվա ընթացքում ինտերնետ հասանելիության խափանումների (բացակայությունների) ժամանակահատվածը չպետք է գերազանցի 90 րոպեն: Սույն դրույթի իմաստով Ինտերնետ հասանելիության խափանումների (բացակայությունների) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում Ինտերնետ հասանելիության բոլոր խափանումների (բացակայությունների) ժամանակահատվածների հանրագումար:
		Մեկ տարվա ընթացքում • հավելված 1 –ի NN 1 և 2 Ցանկերի որևէ կետում կապի խափանումների (բացակայությունների) քանակը չպետք է գերազանցի 12-ը: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամանակով; հավելված 2-ի N 3 Ցանկի որևէ կետում կապի խափանումների (բացակայությունների) քանակը չպետք է գերազանցի 30-ը: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 120 րոպեից ավելի ժամանակով:
		Մեկ ամսվա ընթացքում հավելված 1 –ի NN 1 և 2 Ցանկերի որևէ կետում կապի խափանումների(բացակայությունների) ժամանակահատվածը չպետք է գերազանցի 120 րոպեն, իսկ հավելված 1-ի N 3 Ցանկի որևէ կետում՝ 240 րոպեն: Սույն դրույթի իմաստով կապի խափանման (բացակայության) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում տվյալ կետում կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամանակահատվածների հանրագումար:
4.	Այլ պահանջներ	Օգտագործված ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում
		Կապի առկայության, ինտերնետ հասանելիության որակի և օգտագործվող ծավալի առցանց վերահսկման հնարավորություն
		«/28 IP» հասցեների տրամադրում
		Ինտերնետ կապի ապահովումը պետք է համապատասխանի ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 1069 - Ն որոշման պահանջներին:
5.	Այլ պայմաններ	Համակարգիչը, համակարգչային տեխնիկան, համակարգչի մասերը, ներքին համակարգչային ցանցի ցանցային սարքավորումները ձեռք են բերվում համապատասխան ուսումնական հաստատության կողմից, լիցենզիոն ծրագրային ապահովումները՝ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից և տրամադրվում սպասարկող կազմակերպությանը: Ուսումնական հաստատությունների կապն ապահովելու համար անհրաժեշտ բոլոր ցանցային և այլ սարքավորումները ձեռք են բերվում սպասարկող կազմակերպության կողմից:
		Սպասարկումն իրականացնելու համար անհրաժեշտ է. • առնվազն 3 ցանցային ադմինիստրատոր Երևան քաղաքում և 1 SS մասնագետ յուրաքանչյուր մարզում: Սպասարկումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 9:00-18:00: • զանգերի սպասարկման կենտրոն մեկ ընդհանուր համարով առնվազն 10 զուգահեռ զանգի հնարավորությամբ, որը պետք է գործի աշխատանքային օրերին 9:00-18:00:

		• հայտերի գրանցման և հանձնարարությունների կառավարման առցանց տեղեկատվական համակարգ (online ticketing system, task management system): Համակարգում պետք է գրանցվեն ուսումնական հաստատությունների կողմից բարձրացված բոլոր SS խնդիրները, տեխնիկական հայտ բացող անձի տվյալները (անուն, ազգանուն, պաշտոն, հեռախոսահամար), լուծման ժամկետները: • տեխնիկական խնդրի վերաբերյալ հայտի գրանցման դեպքում ծառայություն մատուցողը պարտավոր է անմիջապես հեռահար կառավարման միջոցով լուծել խնդիրը: Հեռահար կառավարման միջոցներով խնդիրը լուծելու անհնարինության դեպքում ծառայություն մատուցողը պարտավոր է այցով լուծել խնդիրը՝ հայտը բացելու օրվան հաջորդող առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում:
		Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը պետք է ունենա հայտերի գրանցման առցանց տեղեկատվական համակարգում գրանցումներ կատարելու, խնդիրների լուծման ընթացքին հետևելու և ըստ հաշվետու ժամանակահատվածների հաշվետվություններ ստանալու հնարավորություն:

v. ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 14.12.2021թ.-ի թիվ Մ-84163-2021 գրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 1415 ուսումնական հաստատություններին ինտերնետ կապով ապահովելու նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Յուքոմ» ՍՊԸ-ի միջև 2019թ.-ի դեկտեմբերի 30-ին կնքվել է պետության կարիքների համար ծառայությունների մատուցման թիվ «ՀՀՎԱ-ԲԱԾՁԲ-20/1-1» պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 24 ամիս գործողության ժամկետով:

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսվել է ՀՀ ԿԳԱՍ նախարարությանը տրամադրել ֆինանսական միջոցներ՝ 2022թ. թվականի կարիքների համար Հայաստանի կրթական ցանցում ընդգրկված 1420 ուսումնական հաստատություններին ինտերնետի մատակարարման ծառայությունների ձեռքբերման նպատակով: Վերը նշված ծառայությունների գնման նպատակով ՀՀ ԿԳԱՍ նախարարության ենթակայությամբ գործող «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարվել է բաց մրցույթ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:

Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրի գործողության ժամկետն ավարտվում է ս.թ. դեկտեմբերի 31-ին, ինչպես նաև այն, որ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված մրցույթի արդյունքում կնքվելիք պայմանագրի շրջանակներում 2022 թվականի հունվարի 1-ից ուսումնական հաստատություններին ինտերնետ կապի մատակարարումը ապահովելու նպատակով մրցույթի հնարավոր մասնակիցների համար հավասար տեխնիկական պայմանների ապահովումը ժամկետների առումով խնդրահարույց է, ուստի, կապի մատակարարման անընդհատությունն ու անխափանությունն ապահովելու համար ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից նախաձեռնվել է «Գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու թույլտվություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետը

6 (վեց) ամիս ժամանակահատվածով (մինչև 2022 թվականի հունիսի 30-ը ներառյալ) երկարաձգելու նպատակով՝ միաժամանակ համապատասխանաբար ավելացնելով նաև Պայմանագրի գինը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում եմ հանձնարարել համապատասխան ստորաբաժանումներին ձեռնարկել միջոցներ՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գնման մրցակցային եղանակով իրականացնելու պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը՝ 2022թ. հուլիսի 1-ից Հայաստանի կրթական ցանցում ընդգրկված 1420 ուսումնական հաստատություններին ինտերնետ կապի մատակարարումն ապահովելու համար:

vi. ՀՀ կառավարության 23.12.2021թ.-ի թիվ 2116-Ա որոշման 1-ին կետի համաձայն՝ թույլատրել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության 1415 ուսումնական հաստատություններին ինտերնետ կապով ապահովելու նպատակով, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի և «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2019 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված պետության կարիքների համար ծառայությունների մատուցման թիվ «ՀՀՎԱ-ԲԱԾՁԲ-20/1-1» պետական գնման պայմանագրում կատարել փոփոխություն՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերի պահանջները՝ դրանցով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետը երկարաձգելով մինչև 2022 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 03.12.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը:

Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա

ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022-2024թթ. Հայաստանի կրթական ցանցում ընդգրկված 1420 ուսումնական հաստատություններին ինտերնետի մատակարարման, հաստատությունների ներքին համակարգչային ցանցերի, աշխատող համակարգիչների ծրագրային ու տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերման նպատակով 12.10.2021թ.-ին հայտարարված «ԿՏԱԿ–ԲՄԾՁԲ–21/11» ծածկագրով բաց մրցույթի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ծառայությունների մատուցման ժամկետի սկիզբ է համարվում 2022թ.-ի հունվարի 1-ը:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի դիրքորոշումների և Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ԿՏԱԿ–ԲՄԾՁԲ–21/11» ծածկագրով բաց մրցույթի հրավերի թիվ 1 չափաբաժնի մասով սահմանված Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022-2024թթ. Հայաստանի կրթական ցանցում ընդգրկված 1420 ուսումնական հաստատություններին ինտերնետի մատակարարման ծառայության կատարումը 2022թ.-ի հունվարի 1-ից սկսելու մասով, չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը, ուստի ընթացակարգի տեխնիկական բնութագրերը չեն բխում Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներից, ըստ այդմ՝ ենթակա են համապատասխանեցման նշված դրույթների պահանջներին:

Բողոքի քննության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա, դրանք դիտարկելով ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 14.12.2021թ.-ի թիվ Մ-84163-2021 գրության և ՀՀ կառավարության 23.12.2021թ.-ի թիվ 2116-Ա որոշման համատեքստում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընթացակարգի տեխնիկական բնութագրերը՝ ինտերնետի մատակարարման ծառայության կատարումը 2022 թվականի հունվարի 1-ից սկսելու մասով, չեն ելնում Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներին, չեն ապահովում մրցակցության հավասար պայմաններ մասնակիցների համար և չեն բավարարում մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ բողոքի քննության ժամանակ Պատվիրատուի կողմից Հրավերով սահմանված ժամկետների օբյեկտիվության վերաբերյալ նույնպես չներկայացվեց համապատասխան վերաբերելի ապացույց: Պատվիրատուն պետք է ծառայության կատարման ժամկետի սկիզբը սահմանի ելնելով մասնակցի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման հանգամանքից:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ կախված գնման ենթակա ծառայությունից, դրա բարդությունից և ծավալներից, այդ ժամկետը պետք է լինի օբյեկտիվորեն հիմնավորված: Պատվիրատուն (պատասխանատու ստորաբաժանումը) գնման հայտը կազմելիս ծառայության կատարման ժամկետի սկիզբը պետք է սահմանի՝ հաշվի առնելով գնման ենթակա ծառայության կատարման համար անհրաժեշտ բոլոր կողմերը:

Ամբողջացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 14.12.2021թ.-ի թիվ Մ-84163-2021 գրության բովանդակությունը, ինչպես նաև ելնելով 2022թ. հուլիսի 1-ից Հայաստանի կրթական ցանցում ընդգրկված 1420 ուսումնական հաստատություններին ինտերնետ կապի մատակարարումն ապահովելու հանգամանքից, արձանագրում է, որ կապի մատակարարման անընդհատությունն ու անխափանությունն ապահովելու համար, Պատվիրատուն «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022-2024թթ. Հայաստանի կրթական ցանցում ընդգրկված 1420 ուսումնական հաստատություններին ինտերնետի մատակարարման, հաստատությունների ներքին համակարգչային ցանցերի, աշխատող համակարգիչների ծրագրային ու տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերման համար 11.11.2021թ.-ին հայտարարված «ԿՏԱԿ–ԲՄԾՁԲ–21/11» ծածկագրով բաց մրցույթի հրավերը պետք է փոփոխի՝ կապի մատակարարման անընդհատությունն ու անխափանությունն ապահովելու համար: Ընդ որում, Պատվիրատուն պետք է հրավերը փոփոխի այնպես, որ ապահովվի պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը՝ 2022թ. հուլիսի 1-ից՝ շարունակելով գնման ընթացակարգը:

Որպիսի պայմաններում՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ պետք է պարտավորեցնել «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին ընդունել որոշում՝ 11.11.2021թ.-ին հայտարարված «ԿՏԱԿ–ԲՄԾՁԲ–21/11» ծածկագրով բաց մրցույթի հրավերում նշված «2022-2024թթ.» ժամկետը փոխարինել «2022թ. հուլիսի 1-ից 2024թ. դեկտեմբերի 31-ը» ժամկետով՝ հրավերում համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով, միևնույն ժամանակ շարունակելով մրցույթի անցկացումը փոփոխված պայմաններով՝ սահմանելով հայտերի ներկայացման և հայտերի բացման նոր ժամկետ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքով

բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ԿՏԱԿ–ԲՄԾՁԲ–21/11» ծածկագրով բաց մրցույթի հրավերը պետք է փոփոխել՝ սույն որոշմամբ արված վերլուծությունների ու դատողությունների հիման վրա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 03.12.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/112 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ԿՏԱԿ–ԲՄԾՁԲ–21/11» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգի հրավերը փոփոխել՝ սույն որոշմամբ արված վերլուծությունների ու դատողությունների հիման վրա:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**